ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 285 -2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» «06» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Մ. Բաղալյանը, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունիսի 1-ի N 796-Ա/2 հրամանով «Հայ մշակույթը հանրահռչակող օտարալեզու գրականություն» դրամաշնորհի հատկացման մրցույթի մասնագիտական խմբի 2023 թվականի մայիսի 29-ի նիստի N 3 արձանագրությունը՝ որոշման «1124. Գրահրատարակչության և գրադարանների» ծրագրի «11007. Գրականության հրատարակում» միջոցառման շրջանակում «Հայաստանի ուրարտական ժառանգությունը» գրքի անգլերենով հրատարակման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 4920.0 հազար (չորս միլիոն ինը հարյուր քսան հազար) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված 1-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացնված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանգրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են

կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն ծրագրի իրականացման և ընթացքի մասին, այդ թվում՝ արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.11. գրքի հրատարակումն իրականացնել՝ Հավելված N 3-ի պահանջներին համապատասխան,

2.4.12. գրքի տպագրական PDF ֆայլը տպագրությունից առնվազն մեկ ամիս առաջ ներկայացնել պետական մարմնի հաստատմանը,

2.4.13. գրքի տիտղոսաթերթի դարձերեսին նշագրել՝ «Հրատարակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դրամաշնորհով»,

2.4.14. հրատարակված գրքի տպաքանակը հանձնել պետական մարնին՝ աշխարհի առաջատար գրադարանների ֆոնդերը համալրելու նպատակով,

2.4.15. սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների գույքային բացառիկ իրավունքները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը,

2.4.16. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ: Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում,

հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ

տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Պետական մարմնի կողմից սույն պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2023 թվականի դեկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 10-ը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3. Սույն պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտակա-նությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը

կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039717
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Երեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 38
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Արցախ մ/ճ
Հ/Հ 1150012570010100
ՀՎՀՀ 00415967
Հեռ.՝ 093 200 551

Տնօրեն՝

---------- Մ. Բաղալյան

Կ. Տ.

Հավելված N 1
« 26 » «06 » 2023 թ.
N ՄՇԴ -285 -2023 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
«Հայաստանի ուրարտական ժառանգությունը», անգլերեն

1	Կազմակերպության անվանում	«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՀՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք., Երևան, Էրեբունու 37
3	Ծրագրի անվանում	«Հայաստանի ուրարտական ժառանգությունը»
3.1	Բովանդակություն	Նախաբան. Ուրարտագիտության ուսումնասիրության պատմության համառոտ ակնարկ: Հայաստանը նախաուրարտական ժամանակաշրջանում Ամրաշինական համակարգը նախաուրարտական ժամանակաշրջանում: Ուրարտու և Էթիունի: Կայսրության ստեղծումը: Ուրարտուի հնագիտական լանդշաֆատը Ուրարտական սեպագիրը որպես Մերձավոր Արևելքի քաղաքակրթությունների սահման: Կրոնն ու պաշտամունքն Ուրարտուում: Տնտեսություն և կենցաղ: Հայաստանի Հանրապետության ուրարտական կարևոր հուշարձանները: Ամրոց-բնակավայրեր: Դամբարաններ: Սեպագիր արձանագրություններ: Ջրանցքներ: Հայաստանը հետուրտական ժամանակաշրջանում: Հայաստանը որպես Ուրարտական կայսրության ժառանգորդ: Հայաստանի Հանարապետության ուրարտական առարկաների հավաքածուներ ունեցող թանգարանները: Ուրարտուի ժառանգության արտացոլումն ու ընկալումը՝ խորհրդային և մեր ժամանակաշրջաններում՝ ուրարտական անձնանուններ, փողոցներ, կարևոր ապրանքների, կառույցների անուններ և այլն: Վերջաբան:
3.2	Նպատակ	Հայաստանում Ուրարտուի վերաբերյալ հետազոտությունները, ցավոք, գլխավորապես սահմանափակվել են նեղ գիտական հարթակներով: Այդ առումով, հաճախ փորձ է արվում բացը լցնել ոչ մասնագիտական, սակայն հասարակության մի զգալի հատվածին ականջահաճո հրապարակումներով: Դրանք մեծապես շեղում են նաև Սփյուռքի մեր

		հայրենակիցներին: Շատ հաճախ նման հրապարակումներով առաջնորդվում են նաև Հայաստանի տարբեր ուրարտական հուշարձաններ զբոսաշրջիկներ բերած զբոսավարների մի զգալի մասը: Վերջին տարիներին, ցավոք, մի շարք թուրք և ադրբեջանցի ուսումնասիրողների կողմից փորձ է արվում աղավաղել Ուրարտուի պատմությանը վերաբերող փաստերը և այդ համատեքստում ուղղակիորեն անտեսել Ուրարտուի կապը Հայաստանի և հայերի հետ: Միաժամանակ փորձեր են արվում ամեն կերպ նսեմացնել հայ ժողովորդի դերն ու անցած կարևոր պատմական ուղին և կերտած ժառանգությունը: Ուրարտուի պատմությունը առնվազն մի քանի տողով ներառված է Հին Աշխարհի պատմությանը վերաբերող գրեթե բոլոր դասագրքերում: Աստվածաշնչում ՈՒրարտուն հիշատակվում է Արարատի երկիր անվամբ: ՈՒրարտուն, որպես բրենդ, կարող է դառնալ հնագույն Հայաստանի ժառանգության հանրահռչակամն և զբոսաշրջության կարևոր գրավականներից մեկը: Այս առումով խիստ կարևոր է լուրջ հեղինակություն ունեցող մասնագետների կողմից անգլերեն լեզվով Հայաստանի ուրարտական ժառանգությանը նվիրված գիտահանրամատչելի, պատկերազարդ գրքի ստեղծումը:
3.3	Անցկացման ժամկետ	2023 թ. հունիս-դեկտեմբեր
3.4	Անցկացման վայր	«Էրեբու նի» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՀՈԱԿ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ծրագիրը մեծապես ազդելու է Հայաստանի ուրարտական ժառանգությունը աղավաղելու, ամեն կերպ տարածաշրջանում Հայաստանի դերն ու նշանակությունը նսեմացնել փորձող նկրտումների վրա: Ծրագիրը նոր հարթակ կդառնա ուրարտագետների, ինչպես նաև՝ ՈՒրարտուով հետաքրքրվող անձանց համար: Չնայած, որ Հայաստանը համարվում է ուրարտագիտության կենտրոններից մեկը, սակայն մինչ այսօր դեռևս չի հրատարակվել Հայաստանի ուրարտական ժառանգությանը վերաբերող ամփոփ օտարալեզու գիտահանարամատչելի աշխատանք: Ծրագրի նպատակն է ստեղծել «Հայաստանի ուրարտական ժառանգությունը» խորագրով 120 էջանոց անգլերեն լեզվով գիտահանարամատչելի գիրք՝ աշխարհի տարբեր հայտնի ուրարտագետների մասնակցությամբ: Աշխատանքի լույս ընծայումը մեծապես կնպաստի Հայաստանի որպես ուրարտական կայսրության ժառանգորդ լինելու իրողության հանրահռչականը, ուղենշային կդառնա Սփյուռքում բնակավող մեր հայրենակիցների համար, ինչպես նաև՝ կարևոր գործիք կդառնա Հայաստանի հնագույն պատմությունը

		Շապիկը՝ փափուկ կազմ, ստվարաթուղթ, լամինացված, կշիռը՝ 300 գրամ կավճապատ Տպագրության տեսակը՝ օֆսեթ Գույների քանակը՝ 4+4 Կազմարարությունը՝ թերմոսոսինձ, թելակար Պահպանել համակարգչային էջադրման համար ընդունված չափանիշները:
3.	**Հրատարակչական աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա**	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95, 7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին: Հրատարակության մեկ տպագրական մամուլում միջին հաշվով վրիպակների քանակը երեքից ավելի լինելու դեպքում պետական մարմինը իրավունք ունի չընդունել կատարված աշխատանքը:
4.	**Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը**	1. կազմակերպությունը պետական մարմնին խտասկավառակով տպագրությունից առնվազն մեկ ամիս առաջ պետք է ներկայացնի գրքի էջադրված տարբերակը և պետական մարմնի հավանությունից հետո միայն ներկայացնի տպագրության: Պետական մարմինը հրատարակված գիրքը համեմատելու է ներկայացված մակետի հետ: 2. Գրքի տիտղոսաթերթի դարձերեսին պետք է նշագրել. «Հրատարակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դրամաշնորհով»:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039717
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 38
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Արցախ մ/ճ
Հ/Հ 1150012570010100
ՀՎՀՀ 00415967
Հեռ.՝ 093 200 551

Տնօրեն՝

---------- Մ. Բաղալյան

Կ. Տ.

Հավելված N 2

« 26 » « 06 » 2023 թ.

N ՄՇԴ ---285--- պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հայաստանի ուրարտական ժառանգությունը» գրքի անգլերենով հրատարակման ծախսերի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Ծառայություններ**				**4100.0**
	Հայերեն տեքստերի թարգմանություն (50 էջ)	հատ	1	250.000	250.0
	Համակարգչային էջադրում (120 էջ)	հատ	1	300.000	300.0
	Գրքի շապիկի ձևավորում	հատ	1	50.000	50.0
	Տպագրություն (1000 օրինակ)	հատ	1	3500.0	3500.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**4100.0**
	ԱԱՀ**				**820.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**4920.0**
	* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով				
	** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:				

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039717
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան

Կ. Տ.

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 38
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Արցախ մ/ճ
Հ/Հ 1150012570010100
ՀՎՀՀ 00415967
Հեռ.՝ 093 200 551
Տնօրեն՝

---------- Մ. Բադալյան

Կ. Տ.

Հավելված N 3
« 26 » « 06 » 2023 թ.

N ՄՇԴ-285-2023 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Աշխատանքի անվանումը, լեզուն, «Հայաստանի ուրարտական ժառանգությունը», անգլերեն

Հեղինակ՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՀՈԱԿ

Հ/Հ	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1.	**Հրատարակչական աշխատանքի էության համառոտ շարադրանքը**	«Հայաստանի ուրարտական ժառանգությունը» խորագրով գիտահանրամատչելի կոլեկտիվ մենագրությունը բաղկացած է լինելու բիայնագիտությանը տարբեր բնագավառներին նվիրված տրամաբանորեն միմյանց փոխլրացնող նյութերից, որոնք շարադրելու են ուրարտագիտության առաջատար մասնագետները: Այն լինելու է հնարավորինս պարզ և հանրամատչելի, պարունակելու է լավ մշակված լուսանկարներ և 3D վերակազմություններ, պատկերացում է տալու ուրարտական մշակութային ժառանգության վերաբերյալ: Հրատարակման ներկայացվող գիրքը պարունակելու է ուրարտական հնագիտական լանդշաֆտի, հուշարձանների, ամրաշինական համակարգի, պետականության, գրային համակարգի, կրոնի և տնտեսության մասին համապարփակ նյութեր: Գրքում ներկայացված է լինելու Հայաստանի նախաուրարտական ժամանակաշրջանից մինչև հետուրարտական փուլը ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև Հայաստանի ուրարտագիտական ժառանգությունը՝ թանգարանային նյութերը և մշակութային դրսևորումներ:
2.	**Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը**	**Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Գրքի չափը՝ Ա4, 210x270 Միջուկի չափը՝ կավճապատ Ա4, 210x270 Ծավալը՝ 120 էջ Տպաքանակ՝ 1000 **Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ Կավճապատ, անփայլ 170 գրամ **Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 12 (Times New Roman)

		աղավաղելու փորձերին: Գրքի հրատարակումը օտարերկրկյա գիտական հասատություններում, ինչպես նաև՝ զբոսաշրջիկների մոտ նորովի կբացահայտի Հայաստանի երկաթեդարյան ժամանակաշրջանի հզոր ժառանգությունը, ուրարտական հուշարձաններն ու թանգարանները:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Գրքի հրատարակումը կարևոր դեր կունենա Հայաստանի ուրարտական ժառանգության հանրահռչակման համար, հետաքրքրություն կառաջացնի Հայաստանի Հանարապետությունում գտնվող ուրարտական հուշարձանների և թանգարանների հանդեպ և կխթանի այդտեղ զբոսաշրջիկների հոսքի ավելացմանը: Ծրագիրը կարող է ուղենշային հանդիսանալ Հայաստանի ուրարտական հուշարձանները ներկայացնող զբոսավարների, զբոսաշրջային կազմակերպությունների համար: Կարծում ենք, որ գրքի լույս ընծայումից հետո Հայաստանի զբոսաշրջային երթուղում կավելանան նոր ուղղություններ: Ծրագիրը կնպաստի ուրարտական առարկաների հավաքածուներ ունեցող թանգարանների հանրահռչակմանը և այդտեղ այցելուների թվի ավելացմանը: Բազմաթիվ օտարերկրյա թանգարաններ կծանոթանան այդ առարկաներին, ինչը կարող է հիմք հանդիսանալ արտերկրում նոր համատեղ ցուցադրությունների կազմակերպման համար: Գրքի հրատարակումը ամբողջ ուրատագիտական աշխարհին կազդարարի, որ Հայաստանը շարունակում է մնալ ուրարտագիտության առաջնային բևեռն ու կենտրոնը:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039717
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 38
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Արցախ մ/ճ
Հ/Հ 1150012570010100
ՀՎՀՀ 00415967
Հեռ.՝ 093 200 551

Տնօրեն՝

---------- Մ. Բաղալյան

Կ. Տ.

Հավելված N 4

«26» «06» 2023 թ.

N ՄՇԴ-285 -2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

---------- *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ փաստաթղթերն ընդունող պատասխանատու՝

---------- *(անուն, ազգանուն)*
Կ.Տ.

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահը՝

---------- *(անուն, ազգանուն)*

Հավելված N 5
« 26 » « 06 » 2023 թ.
N ՄՇԴ -285 - 2023 պայմանագրի

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.